Քննարկվել է Նիգավանի միջն
դպրոցի մանկավարժների
խորհրդի նիստում 29.08.2022թ.

Նիգավանի միջնակարգ
Տնօրեն՝ Ա. Թորոսյան

ՆԻԳԱՎԱՆԻ ՄԻՋՆ ԴՊՐՈՑԻ
ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ և ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ
2022-2023 ուստարի

Մեթոդմիավորման նախագահ՝ Թորոսյան Անդրանիկ

N	Աշխատանքի բովանդակությունը	Ժամկետ	Կատարող
1.	Համադպրոցական ուսպլանի քննարկում	օգոստոս	Տնօրեն, մմ նախագահներ
2.	2022-2023 ուստարվա մեր խնդիրները և դրանք լուծելու ուղիների ընտրությունը	օգոստոս սեպտեմբեր	մասնախումբ
3.	2022-2023 ուստարվա աշխատանքները ծառայեցնել ուսման որակի և արդյունավետության բարձրացմանը:	ուստարի	մասնախումբ
4.	Ապահովել հավասարարժեք կրթություն մայրենի լեզվով:	ուստարի	մասնախումբ
5.	Հաստատել հանձնախմբի բոլոր անդամների թեմատիկ պլանները	օգոստոս	տնօրենություն
6.	Ինտեգրված դասընթացը բովանդակային և կառուցվածքային առումներով անցկացնելու համար ուսուցչից պահանջել մասնագիտական և մեթոդական լրացուցիչ պատրաստություն:	ուստարի	մասնախումբ

7.	Հիմնական շեշտադրում ուղղել ուսուցման նպատակային մեթոդների ներդրմանը, իրականացնել փոխգործուն ուսուցման մեթոդներ:	ուստարի	մասնախումբ
8.	Անցկացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) աշակերտների դիտարկում և նրանց հոգեբանական զարգացման առանձնահատկությունների գնահատում:	ուստարի	Ա. Թորոսյան
9.	Անցկացնել աշակերտների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկությունների մշտադիտարկում, անհրաժեշտ կանխարգելիչ, խորհրդատվական և վերականգնողական աշխատանքների կազմակերպում:	ուստարի	Ա. Թորոսյան
10.	Աջակցել ուսումնական հաստատությունում բարենպաստ հոգեբանական մթնոլորտի և սովորողների համար ուսուցման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:	ուստարի	Ա. Թորոսյան
11.	ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ անցկացնել հոգեբանական զարգացնող և վերականգնողական անհատական և խմբային աշխատանքներ:	ուստարի	Ա. Թորոսյան
12.	Օժանդակել ուսուցիչներին ԿԱՊԿՈՒ սովորողների համար ուսումնական նյութերի պատրաստման գործընթացում:	ուստարի	Ա. Թորոսյան
13.	Հաճախակի ցուցաբերել օգնություն այն դասարաններում, որտեղ կան ուսումնական գործընթացի հետ կապված դժվարություններ:	ուստարի	Ա. Թորոսյան Մմ անդամներ

14.	Գրականության և արտադասարանային ընթերցանության նյութերի յուրացումը ծառայեցնել աշակերտների մեջ հայրենասիրական, մարդասիրական և բարոյական բարձր գաղափարների պատվաստամանը:	ուստարի	մասնախումբ
15.	Նպաստել աշակերտների ստեղծագործական ունակությունների հայտնաբերմանը, դրանց ուղղորդմանն ու զարգացմանը:	ուստարի	մասնախումբ
16.	Աշակերտների խոսքն անաղարտ դարձնելու և պահպանելու նպատակով կազմակերպել մրցույթներ, սահմանել մրցանակներ և տույժեր:	ուստարի	մասնախումբ
17.	Անցկացնել ստեղծագործական բնույթի շարադրություններ: Արդյունքները քննարկել մասնախմբի հերթական նիստերի ժամանակ:	ուստարի	մասնախումբ
18.	<<Իմ եկեղեցին , Իմ կյանքը>>	ուստարի	Մասնախումբ Հ.Պողոսյան
19.	Ծրագրային նյութերի կատարողականի կազմակերպում և ստուգում:	ուստարի դեկտեմբերմայիս	հանձնախումբ
20.	Նոր ուսումնական տարում լույս տեսած և համացանցում տեղադրված մեթոդական նյութերի քննարկում և վերլուծում:	ուստարի	մասնախումբ

21.	Տարեվերջյան հաշվետվություններ	դեկտեմբեր մայիս	Մմ անդամներ, նախագահ
22.	Մասնախմբի հերթական նիստերի ժամանակ կազմակերպել տարբեր թեմաներով մեթոդական զեկուցումների ընթերցումներ ա/«Խաչիկ Դաշտենց» բ) <<Ռուսական կայսրության պարագլուխները>> գ) «Երևակայություն և մտածողություն>>» դ) «Երվանդ Քոչարը և տարածական նկարչությունը>>» ե) «Նորակազմ բառեր Շիրազի <<Հայոց դանթեականը>> պոեմում» զ) «Ուսուցման գործընթացում աշակերտի և ուսուցչի դերը» է) « Սուրբ Հռիփսիմեի վանքը» ը/ <<Ինքներգություններ>>	ուստարի սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր հունվար փետրվար մարտ ապրիլ	մասնախումբ
23.	Յուրաքանչյուր ուսուցչի ձեռքբերումները և թերացումները բացահայտելու նպատակով կազմակերպել ամփոփիչ դասերի ունկնդրում և քննարկում:	ուստարի	մասնախումբ
24.	Միակցել հայոց լեզվի և գրականության դասընթացները, գրական տեքստը հիմք դարթնել լեզվական նյութի ուսուցման համար:	ուստարի	մասնախումբ
25.	Գրականության դասերին հաճախակի կազմակերպել խոսքի զարգացման աշխատանքներ, ելնելով դասի թեմայի հիմնախնդիրներից՝ ծավալել բանավեճեր:	ուստարի	մասնախումբ

26.	Ամեն վայրկյան հետևողական պայքար տանել ընդդեմ ավելորդաբանությունների և սխալ բառագործածությունների հանուն հայերենի հստակության և գեղեցկության:	ուստարի	մասնախումբ
27.	Դասվանդումը արդյունավետ անցկացնելու համար անհրաժեշտության դեպքում կրթության գործը կազմակերպել նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ, անցկացնել տեսադասեր անհրաժեշտության դեպքում օգտվել համացանցի պաշարների շտեմարանից:	ուստարի	մասնախումբ
28.	Ընտրել արդյունավետ և հիմնավոր միջոցներ՝ գրքի քննարկումներ և մրցույթներ, աշակերտների մոտ գրքի և ընթերցանության նկատմամբ հետզհետե մարող հետաքրքրությունը արթնացնելու համար:	ուստարի	մասնախումբ
29.	Կազմակերպել փոխադարձ դասալսումներ, քննարկել, փորձել յուրաքանչյուր դասից վերցնել ուսանելի հատիկ:	ուստարի	մասնախումբ
30.	Ուշադրության կենտրոնում պահել հոբելյանական առիթները, կազմակերպել միջոցառումներ:	ուստարի	մասնախումբ
31.	Կազմակերպել բաց դասեր, ասմունքի մրցույթներ, գրական վիկտորինաներ:	ուստարի	մասնախումբ
32.	Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ դեպի ազգային մշակութային օջախներ՝ դրանք ծառայեցնելով հայ մարդու հայեցի դաստիարակության գործին:	ուստարի	մասնախումբ

33.	Պարբերաբար ստուգման ներկայացնել աշակերտական թեմատիկ աշխատանքները՝ ուշադրություն դարձնելով ձեռագրերին:	ուստարի	Ա.Թորոսյան
34.	Ուշադրություն դարձնել թեմատիկ գրավորների գնահատականների համապատասխանությանը էլեկտրոնային դասամատյանի գնահատականների և գնահատման չափորոշիչներին:	ուստարի	Ա. Թորոսյան
35.	Տնօրենության կողմից տրվող ներդպրոցական գրավոր աշխատանքների կազմակերպում, անցկացում, ստուգում և հաշվետվություն:	նոյեմբեր ապրիլ	տնօրենություն Ա. Թորոսյան մասնախումբ
36.	Հումանիտար առարկաների առարկայական օլիմպիադաների ներդպրոցական փուլի նախապատրաստում և անցկացում:	նոյեմբեր դեկտեմբեր	մասնախումբ
37.	Ներկայացնել հաշվետվություն օլիմպիադայի արդյունքների մասին:	հունվար	մասնախումբ
38.	Առաջին կիսամյակից հետո կազմակերպել կիսամյակային արդյունքների մանրամասն քննարկում, վերլուծում և թերությունների վերհանում, թերությունները վերացնելու նպատակով հանձնարարականների ընդունում:	հունվար	Ա. Թորոսյան մասնախումբ
39.	Եկեղեցիական տոները մեր կյանքում	փետրվար	Մասնախումբ Հ. Պողոսյան

40.	Բարձրարվեստ և հայեցի երաժշտության, գունային և պատկերային զգացողության դաստիարակության միջոցով զարգացնել մատաղ սերնդի ճաշակը և գեղեցիկի ընկալումը՝ հարազատ մնալով ազգային արմատներին:	ուստարի	Ա. Թորոսյան

41.	Մեր ազգի հերոսները	ուստարի	Ա. Թորոսյան Խ. Սաֆարյան
42.	Բացակության թույլատրելի սահմանը գերազանցած աշակերտների քննությունների նախապատրաստում, կազմակերպում, անցկացում:	մայիս	տնօրենություն մ/մ ուսուցիչներ
43.	9-րդ դասարաններում անցկացվելիք քննությունների նախապատրաստական աշխատանքների իրականացում, անցկացում և արդյունքների ամփոփում:	մայիս հունիս	տնօրենություն հայոց լեզվի և գրականության, պատմության ուսուցիչներ
44.	Մեթոդմիավորման 2022-2023 ուստարվա կատարած աշխատանքների գնահատում, նկատված թերությունների և թերացումների վերհանում, քննարկում և խնդրի լուծման առաջարկությունների ամրագրում՝ հաջորդ ուստարում դրանցից զերծ մնալու համար:	հունիս	մ/մ նախագահ անդամներ